

ՖՈՒՏԲՈՒԼԻ ՄՐՑԱՎԱՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒՄԸ ԽԱՂԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

Գևորգյան Ա. Է. (Հայկական պեդագոգական մանկավարժական համալսարան,
Երևան, Հայաստան)

armfootsport@gmail.com

Ներկայացման ամս. 02.03.2021

Գրախոսման ամս. 30.03.2021

Տպագրության ընդունման ամս. 13.04.2021

Հոդվածում ամփոփ ներկայացված է ֆուտբոլի մրցավարի գործունեության հուսալիությանը վերաբերող շուրջ 10 տարիների գիտահետազոտական աշխատանքի արդյունքները: Երկարատև աշխատանքի ընթացքում կատարվել է մրցավարի անհատական-հոգեբանական առանձնահատկությունների համալիր ուսումնասիրում: Հետազոտության արդյունքներով բացահայտվել են ֆուտբոլի մրցավարների գործունեության հուսալիությունն ապահովող հոգեբանական կարևոր բաղադրատարրերը, ինչպես նաև մրցավարի մասնագիտական պատրաստության համակարգի կառուցվածքային հոգեբանական որոշ առանձնահատկություններ:

Ֆուտբոլի մրցավարի գործունեության համալիր ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հոգեբանական հարմարումը ժամանակակից պահանջներին հնարավոր է, սակայն դրա համար հարկավոր է մասնագիտական նոր գիտելիքների ձեռք բերում և հոգեբանական պատշաճ պատրաստվածություն: Միևնույն ժամանակ, համաշխարհային փորձից պարզ է դառնում, որ ժամանակակից ֆուտբոլում մրցավարությունն առանց տեխնիկական միջամտության չի կարող լինել անսխալ:

DOI: <https://doi.org/10.46991/SBMP/2021.4.1.049>

Հանգուցային բառեր՝ ֆուտբոլի մրցավար, հոգեբանական հարմարում, տեսողական հիշողություն, ըմբռնման խորություն, դինամիկ ուշադրություն, համարձակություն, վճռականություն, հուզական կայունություն, հակազդեցություն:

Ներկայիս բարձր նվաճումների սպորտում տարեց-տարի ավելի է կարևորվում մրցավարության դերն ու նշանակությունը: ՁԼՄ-ներում, հասարակության լայն շրջանակներում բազմիցս ենք ականատես դառնում միջազգային տարբեր մրցումների մրցավարությանն ուղղված բողոքարկումների, դժգոհությունների: Իհարկե դրանք վերաբերում են բոլոր մարզաձևերին, սակայն ֆուտբոլի մրցավարների առումով կարելի է հաստատել, որ հիմնախնդիրն առավել քան երբևէ ընդունել է նշանակալի չափեր:

Ի սկզբանե մրցավարական կանոններն ու կանոնադրական դրույթները գրեթե բոլոր մարզաձևերում, այդ թվում և ֆուտբոլում մշտապես ենթարկվել են փոփոխությունների: Եթե նախորդ դարում ուշադրություն է դարձվել մրցավարների ֆիզիկական պատրաստությանն ու տեսական գիտելիքներին, ապա վերջին երկու տասնամյակում բնագավառի մտահոգ գիտնականներն անդրադառնում են նաև մրցավարների հոգեբանական պատրաստությանը (Ա. Է. Գևորգյան [1, 2], Е. П. Ильин [3], М. А. Кузьмин [4, 5], Б. Първанов, Ал. Такев, Г. Аджаров [6]):

Ֆուտբոլի սրընթաց զարգացումը, խելահեղ տեմպը, արագությունը հետզհետե առաջացրին հոգեբանական բնույթի մրցավարական բազմաթիվ սխալներ, ակնհայտ դարձան մրցավարների տարածաժամանակային և շարժողական ընկալումների, ուշադրության կենտրոնացվածության, բաշխվածության, պատկերային կամ իրավիճակային հիշողության թերի կամ սխալ հակազդումները, իրավիճակների թյուրըմբռնումները, և պարզ դարձավ, որ ժամանակակից ֆուտբոլի մարտահրավերներին դժվար է դիմակայել մրցավարական երեք հոգանոց կազմով: ՖԻՖԱ-ն որոշեց նախ մրցավարական բրիգադում ավելացնել ևս մեկ մրցավար (4-րդ պաշտոնյա), ապա կյանքի կոչվեց 6 հոգով խաղի սպասարկման ծրագիրը [6]: Իսկ 2018 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնությունում ներդրվեց երկար տարիներ քննարկման առարկա դարձած կրկնապատկերի տեսադիտման (VAR) համակարգը [7]: Այսպիսով, մրցավարական բրիգադն ընդամենը 20-25 տարում երեք հոգուց վերածվեց շուրջ 6-8 հոգանոց անձնակազմի, սակայն մրցավարի գործունեության և անձի հոգեկան հուսալիության հիմնախնդիրները դեռևս շտկման ու բարելավման կարիք ունեն: Այս հանգամանքն էլ հենց առիթ հանդիսացավ, որպեսզի մենք գիտականորեն ուսումնասիրենք ֆուտբոլի մրցավարության գործընթացի և մրցավարի անձի հոգեբանական պատրաստության հիմնախնդիրները:

Այսպիսով, առաջադրվեց **հետազոտության հետևյալ նպատակը**. Ֆուտբոլի մրցավարի անհատական-հոգեբանական առանձնահատկությունների համալիր ուսումնասիրության միջոցով բացահայտել վերջիններիս մրցավարական գործունեության հուսալիությունն ապահովող հոգեբանական բաղադրատարրերը, բացահայտել մրցավարների մասնագիտական պատրաստության համակարգի կառուցվածքային հոգեբանական առանձնահատկությունները:

Նպատակին հասնելու համար առաջ քաշվեցին հետևյալ խնդիրները.

1. Տեսականորեն վերլուծել հուսալիության հիմնախնդրի ուսումնասիրման վերաբերյալ առկա ամենատարբեր մոտեցումներն ու հայեցակետերը, դուրս բերել մրցավարների և մրցավարական գործունեության հուսալիության հոգեբանական բաղադրատարրերը:

2. Պարզաբանել ֆուտբոլի մրցակցային գործունեության կառուցվածքային յուրահատկությունները և մրցավարի պատրաստականությանը ներկայացվող պրոֆեսիոնալ պահանջները:

3. Տեսական և փաստական վերլուծությամբ պարզաբանել ու հիմնավորել մրցակցային իրավիճակներում ֆուտբոլի մրցավարների կողմից սխալ որոշումների կայացման պատճառներն ու հետևանքները:

4. Լաբորատոր բնական հետազոտական ճանապարհով ախտորոշել ֆուտբոլի տարբեր որակավորման մրցավարների հոգեշարժիչ և անձնային գործոնները, վերլուծել դրանց դրսևորման առանձնահատկությունները:

5. Մաթեմատիկական վիճակագրական վերլուծության միջոցով բացահայտել որակավորման տարբեր աստիճան ունեցող մրցավարների անձնային, հոգեշարժիչ ընդունակությունների և հոգեկան հուսալիության գործոնների առավել հավաստի կապերն ու դրանց նշանակությունը:

6. Փորձարարական ուսումնասիրություններից ստացված արդյունքներով հիմնավորել ներկայիս ֆուտբոլի մրցավարի պրոֆեսիոնալ պատրաստության համակարգում հոգեբանական պատրաստության դերն ու նշանակությունը:

Հետազոտության մեթոդներն են հանդիսացել.

- մասնագիտական և գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծություն,
- հարցաթերթիկային հարցում,
- հոգեբանական թեստավորում (Ռ. Քեթթել բազմագործոն հարցարան՝ 16 ԱԳ, տարբերակ «Ա», Միլմանի մրցակցային հոգեկան հուսալիության հարցարան),
- բնական դիտում և տեսադիտում (մրցումային պայմաններում, ԱԱ հանդիպումների տեսագրությունների վերլուծություն),
- գործիքային հոգեախտորոշում (հոգեկան գործընթացների և հոգեշարժիչ ցուցանիշների ուսումնասիրում),
- մաթեմատիկական վիճակագրական վերլուծության մեթոդներ:

Հետազոտությանը մասնակցել են Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի 40 մրցավարներ, որոնք ըստ որակավորման աստիճանի բաժանվել են Ա և Բ խմբերի՝ յուրաքանչյուրում 20-ական մասնակից:

Մրցավարի գործունեության հուսալիությունը պայմանավորող հոգեբանական գործոնների թվում հետազոտված 88 ցուցանիշներից առավել կարևորները կազմեցին մեր աշխատանքի առանցքը:

Մրցավարի գործունեության արդյունավետության առավել յուրահատուկ հոգեբանական գործոնների վերլուծությունից պարզ դարձավ, որ մրցավարների մոտ կարևորվում են տեսողական հիշողությունը, պատկերների ըմբռնման խորությունը, դինամիկ ուշադրությունը, տեսադաշտի ծավալը, տարբեր տեսակի հակազդումները:

Եվ այսպես, տեսողական պատկերային ընկալման և հիշողության տախիստոսկոպիկ ուսումնասիրման մեթոդիկայի 5-պատկերանոց սլայդի արդյունքներով մրցավարների մոտ նկատվում է բավականին հուսալի արդյունքներ, սակայն երկու խմբերում էլ կտրուկ նվազում է նկատվել նույն թեստի 7 և 10 պատկերներով փորձի անցկացման ժամանակ: Իսկ դա նշանակում է, որ թեև ֆուտբոլի մրցավարների պատկերային և իրավիճակային հիշողությունը բավականին զարգացած է, սակայն առավել խառնաշփոթ պահերին, արտակարգ իրադրություններում նրանց մոտ նկատվում է ճշգրիտ որոշման կայացման հուսալիության արդյունքների անկում: Վերջինս բնորոշ է հատկապես տուգանային հրապարակում և դրա մատույցներում տեղի ունեցող խառը իրավիճակներին [1]:

Ուշադրության փոխադրումը և կենտրոնացվածությունը որոշող «Շուլտեի արդյուսակները» մեթոդիկայից պարզ դարձավ, որ Ա խմբի առանձին անդամների մոտ նկատվում է ուշադրության փոխադրման գերազանց դրսևորում, ու նրանց մեծ մասը ՖԻՖԱ-ի մրցավարի օգնականներ են: Դա վկայում է այն մասին, որ եզրային մրցավարների (մրցավարի օգնականներ) մոտ դինամիկ ուշադրությունն ավելի զարգացած է, և որքան նրանք ավելի բարձր կարգ ունեն, այնքան հուսալի են դառնում այս ցուցանիշի առումով:

Տեսադաշտի պերիմետրիկ և տարածական ընկալման ճշգրտության մեթոդիկայի (աչքաչափի քանոն) միջոցով կատարված հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ հետազոտված մրցավարների տեսադաշտի սահմաններն ու ծավալը զիջում են մարզական միջին ստանդարտի ցուցանիշներին:

Հետազոտվել են նաև մրցավարի զգայաշարժողական հակազդումները, այդ թվում՝ պարզ շարժողական հակազդում, բարդ շարժողական հակազդում և շարժվող օբյեկտի հանդեպ հակազդում: Այս շարքում մրցավարների Ա և Բ խմբերի միջև էական տարբերություն է արձանագրվել հատկապես շարժվող օբյեկտի հանդեպ ցուցանիշների արդյունքներով, ինչից կարելի է ենթադրել, որ մասնագիտական փորձի և հմտության ավելացման հետ մեկտեղ աստիճանաբար կատարելագործվում ու զարգանում է հակազդման այս տեսակը:


Որպես մասնագիտական գործունեության արդյունավետության անձնային գործոն հետազոտվել են ֆուտբոլի մրցավարի անձի հետևյալ հատկությունները՝ համարձակություն, վճռականություն, հուզական կայունություն, սթրեսակայունություն, բանականություն, որոնք ըստ մրցավարների սուբյեկտիվ գնահատման հանդիսանում են մրցավարության առաջնային գործոններ: Ինչպես պարզվեց, ըստ սուբյեկտիվ գնահատման արդյունքների, համարձակությունը, վճռականությունը և հուզական կայունությունը կարևորվել են Ա և Բ խմբի մրցավարների մոտ: Համարձակության և հուզական կայունության բարձր ցուցանիշներ են նկատվել նաև Քեթթելի 16 գործոնների հետազոտության արդյունքներից: Մրցավարների գործունեության հուսալիության

ապահովման առաջատար գործոններից են հանդիսանում մտածողության առանձնահատկությունները (տեմպ, խորություն, համադրություն): Ըստ սուբյեկտիվ գնահատականի՝ մրցավարներն առավել կարևորել են մտածողության տեմպը: Ըստ հետազոտության արդյունքների՝ բարձր որակավորման խմբի մրցավարների ինտելեկտի միջին ցուցանիշը (8,4) զգալիորեն բարձր է Բ խմբից: Բացի այդ, Ա խմբի 20 մրցավարներից չորսի բանականության մակարդակը ամենաբարձր սանդղակի վրա էր, և նրանք բոլորն էլ ՖԻՖԱ-ի մրցավարներ են [2]: Ցածր որակավորման մրցավարների մոտ ինտելեկտի միջին ցուցանիշը կազմել է 6,75 միավոր, որը միջին մակարդակն է:

Բարձր որակավորման մրցավարների մոտ կարևորվել են նաև գերակայությունն ու անկախությունը, իսկ ցածր որակավորման մրցավարների մոտ՝ անզսպությունը: Այս հանգամանքը բացատրվում է այն բանով, որ ժամանակի ընթացքում մրցավարները փորձ են ձեռք բերում, խաղադաշտում իրենց ավելի վստահ են զգում, տիրապետում են իրավիճակին և խաղի ընթացքում սեփական վարքով ու կանոնադրական պահանջներով իրենց են ենթարկում ֆուտբոլիստներին, մարզիչներին, երբեմն էլ երկրպագուներին:

Մրցավարների հետազոտված հոգեշարժիչ ոլորտի և անձնային հատկությունների ու առաջատար ցուցանիշների վերաբերյալ հարցաթերթիկային հարցումների արդյունքներից պարզվում է, որ ըստ մրցավարների սուբյեկտիվ գնահատականի, դրանք գրեթե նույնությամբ կարևորվում են: Դրանց խմբին են դասվում համարձակությունը, վճռականությունը, հուզական դիմացկունությունը, ակնառու պատկերային հիշողությունը, ուշադրության կենտրոնացվածությունը, բաշխումը, ինտենսիվությունը, ըմբռնման ամբողջականությունն ու ստույգությունը, արագությունը, մտածողության տեմպը: Նշված բոլոր գործոնների առումով մեր կողմից իրականացվել է հետազոտական համեմատական ուսումնասիրություններ մրցավարի տարբեր որակավորման աստիճանի խմբերում:

Առանձնակի կարևորում ենք տարբեր որակավորում ունեցող մրցավարների գործունեության հուսալիության առաջատար հոգեբանական գործոնների համահարաբերակցական կապերի համեմատական գրաֆիկական վերլուծության արդյունքները:



Նկար 1. Տարբեր որակավորում ունեցող մրցավարների գործունեության հուսալիության առաջատար հոգեբանական գործոնների համահարաբերակցական կապերի համեմատական վերլուծություն.

Նկարում ներկայացված են բարձր որակավորման մրցավարների գործունեության հուսալիության հոգեբանական գործոնների համահարաբերակցական և հավաստի կապերը, որում տեղ են գտել մրցավարի գործունեության հուսալիության մեր կողմից հետազոտված 35 ցուցանիշներից հիմնական 8 գործոնները:

Ներկայացված ցուցանիշներից տեսողական հիշողությունը, համարձակությունը և ներքին անորոշության սթրեսորների հանդեպ դիմացկունությունը հանդիսանում են մրցավարի գործունեության հուսալիության առաջատար գործոններ: Ինչպես երևում է գծապատկերից, դրանք միմյանց հետ գտնվում են փոխադարձ հավաստի համահարաբերակցական կապի մեջ և յուրաքանչյուրն ունի 4 և ավելի կապեր մնացած գործոնների հետ:

Առկա 5 երկրորդական գործոններն իրենց կապերի արժեքով ու հավաստիությամբ լրացնում են առաջատար գործոնների գործնական դերը, մրցավարի գործունեության արդյունավետության գործում և ներկայացնում են

մրցավարի անձնային, հեգեշարժիչ և հոգեկան վիճակների ոլորտները: Օրինակ՝ տեսողական հիշողության կապերը լրացուցիչ գործոնների հետ վկայում են, որ այն պայմանավորված է շարժվող օբյեկտի հանդեպ հակազդման, պարզ և բարդ շարժողական հակազդումների, ուշադրության արդյունավետությամբ, ինչպես նաև արտաքին սթրես գործոնների հանդեպ դիմացկունությամբ:

Նույնատիպ սկզբունքայնությամբ վերլուծել ենք համեմատաբար ցածր որակավորման մրցավարների գործունեության հուսալիության կառուցվածքային բաղադրատարրերն իրենց համահարաբերակցական հավաստի կապերով: Այն ներառում է 13 գործոն, որոնցից երեքը առաջատար են, իսկ 10-ը երկրորդային:

Երկու խմբում էլ հոգեկան հուսալիության կառուցվածքի առաջատար գործոնների շարքում ամենաառաջնային դիրքը պատկանում է տեսողական հիշողությանը, որն այս (ցածր որակավորման) խմբում դրսևորել է հավաստի համահարաբերակցական կապ մնացած բոլոր 12 գործոնների հետ, որոնցից 8-ը առկա էին նաև առաջին (բարձր որակավորման) խմբում՝ այդ թվում պարզ, բարդ շարժողական հակազդումները, շարժվող օբյեկտի հանդեպ հակազդումը, ներքին և արտաքին անորոշության սթրես գործոնների հանդեպ դիմացկունությունը և ուշադրությունը:

Երկրորդ՝ ցածր որակավորման մրցավարների խմբում առկա են անձնային, կամային, մտածողական և սթրեսակայունության լրացուցիչ գործոններ, որոնք բարձր որակավորման մրցավարների գործունեության հոգեկան հուսալիության համակարգում տեղ չեն գտել: Այսինքն կարելի է ենթադրել, որ մրցավարի մասնագիտական (պրոֆեսիոնալ) որակավորմանը զուգընթաց ձևավորվում են ավելի հստակ կառավարման մեխանիզմներ, որոնք բարձրացնում են նրանց գործունեության հոգեկան հուսալիությունը: Օրինակ, ցածր որակավորման մրցավարների երկու առաջատար գործոնները՝ հուզական կայունությունը և արտաքին անորոշության սթրես գործոնների հանդեպ դիմացկունությունը, բարձր որակավորման մրցավարների խմբում փոխարինվել են համապատասխանաբար համարձակության և ներքին անորոշության սթրես գործոնների հանդեպ դիմացկունության գործոններով:

Այսպիսով, ֆուտբոլի մրցավարի գործունեության հոգեկան հուսալիության հետազոտական ցուցանիշների ներկայացված արդյունքներից պարզ է դառնում, որ ֆուտբոլի մրցավարների հոգեբանական հարմարումը ժամանակակից պահանջներին հնարավոր է միայն մասնագիտական գիտելիքներին զուգընթաց զարգացնելով նաև հոգեբանական պատրաստվածությունը: Ուստի հետազոտված ցուցանիշների համատեղությունը բարձր և ցածր որակավորման խմբերի համար կարող են հանդիսանալ մոդելային բնութագրեր և հիմքեր մրցավարների ընտրության, ուսուցման և կատարելագործման գործընթացների արդյունավետ կազմակերպման համար:

Բացի այդ, հարկ է նշել, որ թեև մասնագիտական գիտելիքների, ֆիզիկական և հոգեբանական պատրաստության բարձր մակարդակ ապահովելով՝ հնարավոր է մրցավարական սխալների քանակը հասցնել նվազագույնի, սակայն էական արդյունքի հասնելու համար հարկավոր է ֆուտբոլի Հայաստանի առաջնություններում շուտափույթ ներդնել մրցավարի տեսաօգնականի (VAR) համակարգը:

Գրականություն

1. **Վևորգյան Ա. Է.** Մրցավարի գործունեության հուսալիությունը պայմանավորող հոգեբանական գործոնները (ֆուտբոլի օրինակով). Հոգ. գիտ. թեկնածուի ատենախոսություն, Երևան, 2019
2. **Геворкян А. Э.** Психологические факторы, обеспечивающие надежную деятельность футбольного арбитра. // Чрթությունը և գիտությունը Արցախում 2016, N 3-4, էջ 8-15.
3. **Ильин Е. П.** Психология спорта / Е. П. Ильин. – СПб.: Питер, 2008. – С. 326-333.
4. **Кузьмин М. А.** Психологические факторы успешности судейской деятельности в футболе // Психологические основы педагогической деятельности. Материалы 29-й научной конференции СПб ГАФК им. П. Ф. Лесгафта. – СПб., 2002. – С. 51-54.
5. **Кузьмин М. А.** Психологические факторы судейской деятельности в футболе: автореф. дис. на соис. уч. степ. канд. психол. наук (13.00.04) / Кузьмин Максим Александрович – СПб., 2004. – 16 с.
6. **Първанов Б., Такев Ал., Аджаров Г.** Исследование деятельности футбольных судей // Материалы научной конференции психологов спорта социалистических стран. Симпозиум IV. Психологические вопросы обучения, спортивной тренировки и соревнований. – М., 1970. – С. 22–25.
7. <https://www.ua-football.com/userblogs/post/592a94e98defc39fc2d8796acff148d8c> Судья за воротами. Зачем? (այց՝ 02.02.2021)
8. <https://football-technology.fifa.com/en/media-tiles/video-assistant-referee-var/> Video Assistant Referees (VAR) (այց՝ 01.02.2021)

ПСИХОЛОГИЧЕСКАЯ АДАПТАЦИЯ ФУТБОЛЬНОГО АРБИТРА К СОВРЕМЕННЫМ ТРЕБОВАНИЯМ ИГРЫ

Геворкян А. Э. (АГПУ, Армения, Ереван)

В статье обобщены результаты около 10 лет исследований надежности футбольного судьи. В ходе многолетней работы было проведено комплексное

изучение индивидуально-психологических особенностей рефери. Результаты исследования позволили выявить важные психологические составляющие, обеспечивающие надежность деятельности судьи, а также некоторые структурно-психологические особенности системы подготовки футбольных арбитров.

Комплексное изучение деятельности футбольного судьи показало, что психологическая адаптация к современным требованиям возможна, но требует приобретения новых профессиональных знаний и психологической подготовки. В то же время мировой опыт показывает, что судейство в современном футболе не может быть безошибочным без технического вмешательства.

***Ключевые слова:** футбольный судья, психологическая адаптация, зрительная память, глубина восприятия, динамическое внимание, смелость, решительность, эмоциональная устойчивость, реакция.*

PSYCHOLOGICAL ADAPTATION OF FOOTBALL REFEREE TO MODERN REQUIREMENTS OF THE GAME

Gevorgyan A. E. (ASPU, Yerevan, Armenia)

The article summarizes the results of about 10 years of research on the reliability of a football referee. In the course of many years of work, a comprehensive study of the individual psychological characteristics of the referee was carried out. The results of the study made it possible to identify important psychological components that ensure the reliability of a referee's activity, as well as some structural and psychological features of the system of training judges.

A comprehensive study of the activities of a football referee showed that psychological adaptation to modern requirements is possible, but requires the acquisition of new professional knowledge and psychological preparation. At the same time, world experience shows that refereeing in modern football cannot be error-free without technical intervention.

***Key words:** football referee, psychological adaptation, visual memory, depth of perception, dynamic attention, courage, determination, emotional stability, reaction.*